ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

28.08.2015թ.
258-ի 8

Մարալիկի քաղաքապետ
պարոն Արտակ Գեւորգյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գեւորգյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Այն կազմակերպությունների ցանկը, որոնցից Մարալիկի քաղաքապետարանը դրամաշնորհ է ստացել 2012թ.-ին՝ նշելով յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված դրամաշնորհի չափն առանձին,
2. Այն կազմակերպությունների ցանկը, որոնցից Մարալիկի քաղաքապետարանը դրամաշնորհ է ստացել 2013թ.-ին՝ նշելով յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված դրամաշնորհի չափն առանձին,
3. Այն կազմակերպությունների ցանկը, որոնցից Մարալիկի քաղաքապետարանը դրամաշնորհ է ստացել 2014թ.-ին՝ նշելով յուրաքանչյուր կազմակերպությունից ստացված դրամաշնորհի չափն առանձին:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան